Զարգացման ծրագրի բովանդակություն

1. **Ներածություն----------3**
2. **Ընդհանուր տեղեկություններ ուսումնական հաստատության մասին----------6**
3. **Իրավիճակի վերլուծություն,ուժեղ և թույլ կողմեր**----------10
   3.1 Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա----------10
   3.2 Կառավարման և խորհրդակցական այլ մարմիններ----------11
   3.3Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ----------11
   3.4 Ուսումնական միջավայրը----------12
   3.5 Մանկավարժական համակազմը----------12
   3.6 Հաստատության տրամադրաշ կրթության որակը ----------13
   3.7Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները ----------13
4. **Հաստատության առկա հիմնախնդիրները** ----------14
5. **Նպատակների և խնդիրների սահմանումը: Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, ակնկալվող արդյունքը, արդյունքների գնահատման չափանիշները ,պատասխանատուները,գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ռիսկերը(տես ըստ ոլորտների)**
   *Ոլորտ 1.*Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա ----------16
   *Ոլորտ 2.*Կառավարման և խորհրդակցական այլ մարմիններ----------19
   *Ոլորտ3.*Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ ----------22
   *Ոլորտ 4.*Ուսումնական միջավայրը----------25
   *Ոլորտ 5.*Մանկավարժական համակազմը----------28
   *Ոլորտ 6.*Աշակերտական համակազմը ----------33
   *Ոլորտ 7.*Կրթության բովանդակություն և որակ----------36
   Ոլորտ 8. Տեխնոլոգիաներ և կիրառվող նորարարություններ----------39
6. **Վերահսկողության մեխանիզմներ----------41**

Ներածություն

Դպրոցի զարգացման ծրագիրը այն հիմնարար ու կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա կառուցվում է դպրոցի առաջիկա հինգ տարիների կրթական և դաստիարակչական գործունեությունը, ներառյալ այն նպատակներն ու խնդիրների իրականացումը, որոնք նախանշում են զարգացման հիմնական ուղիները և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը:

Սույն ծրագիրը մշակել եմ՝ հիմնվելով ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և օրենքների, ինչպես նաև *ուղղորդվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. հունվարի 15-ին հաստատված Հ.16-Ն հրամանով* ամրագրված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջներն ու ձևաչափը>> փաստաթղթով: 2023-2028թթ. զարգացման ծրագիրը մշակվել է համապարփակ վերլուծության արդյունքում և վերջին մի քանի տարիների կտրվածքով, ինչպես նաև կրթության ոլորտում այս պահին իրականացվող արմատական փոփոխությունների հիմնական ուղենիշների հիման վրա, որոնց արդյունքում շեշտը կդրվի ստեղծագործ մարդու և ապագա քաղաքացու կրթության և դաստիարակության վրա:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները ձևակերպել եմ՝ հիմնվելով հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման հիմնական երկու բաղադրիչների վրա

- Ուսումնական բնագավառների և կրթության բովանդակության բաղադրիչները
- Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջները,կարողունակությունները

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

- ՀՀ Սահմանադրություն
- «Կրթության մասին » ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Երեխայի իրավունքների մասին » կոնվենցիա
- Աշխատանքային օրենսգիրք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրեն
- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք
- Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ
- ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
- Դպրոցի կանոնադրություն
- Դպրոցի ներքին իրավական ակտեր
- Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր,որոշումներ,հրամաններ,կարգեր

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

2023-2028 թվականներ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է 2023-2028 թթ ընթացքում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած խնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն և կրթօջախի առաջընթացին՝ ժամանակի նորարարություններին համընթաց: Իրավիճակի վերլուծության և հիմնախնդիրների բացահայտման հիման վրա սահմանվել են զարգացման ծրագրի նպատակներն ու համապատասխան խնդիրները:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Առաջիկա 5 տարում զարգացման առաջնահերթությունների կանխորոշում և կրթության որակի բարելավում:
- Դպրոցի ներքին նորմատիվ իրավական ակտերի վերաձևակերպում այնպես, որ այն բխի ծրագրում շարադրված առաջնահերթություններից և կրթության քաղաքականության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներից:
- Բարձրակարգ և ոլորտի առաջատար մասնագետների ներգրավում՝ սովորողների շրջանում սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:
- Դպրոցում ստեղծել մանկավարժների ստեղծագործական գործունեության համար պայմաններ, արժանապատիվ վարձատրություն, հարգանքի, համագործակցության և փոխվստահության մթնոլորտ:
- Այնպիսի կրթական ծրագրերի և գործողությունների մշակում, որոնք կապահովեն կրթական տարբեր աստիճաններում սովորողների կողմից չափորոշչային պահանջների յուրացումը, կնպաստեն նոր բովանդակության և նորարարական կրթական մեթոդների և մոտեցումների ներդրմանը, կապահովեն արդիականացված կրթական և առողջ միջավայր, որը կհամապատասխանի համայնքի կարիքներին, արդի կրթության պահանջներին, ինչպես նաև կնպաստի սովորողների էմոցիոնալ ինտելեկտի զարգացմանը,քննադատական մտածողության զարգացմանը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացում՝ հիմնվելով գործող օրենսդրության վրա:
- Կրթության որակի բարձրացում
- Կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա:
- Որակյալ կրթության մատչելիության ապահովում:
- Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ/ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև 2028 թվականը դառնալ հասարակության, տնտեսության, պետության զարգացող պահանջներին համապատասխան, տեսական ու կիրառական գիտելիքներ, գործնական հմտություններ ու ժամանակակից և նորարարական կարողություններ տրամադրող առաջատար հանրակրթական դպրոցներից մեկը:

Դպրոցի առաքելությունն իր սովորողներին ազգային հենքի վրա որակյալ ու մատչելի կրթության տալն է՝ դնելով համակողմանիորեն զարգացած հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորման հիմքերը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- Պետական բյուջե
- Արտաբյուջետային միջոցներ
- Դրամաշնորհներ
- Բարերարներ և նվիրատուներ
- Շրջանավարտներ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԸ

Դպրոցի համակազմ՝ դպրոցի շահառուների հետ համագործակցությամբ:

2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաստատության անվանումը՝ ՀՀ Լոռու մարզի <<Սարատովկայի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Հաստատության հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Գ. Սարատովկա , փ 3/շ 5

Հաստատության հեռախոսահամարը, 099614819

էլեկտրոնային հասցեն՝ saratovkaschool@yandex.ru

Հաստատության ինտերնետային կայք http://saratovka.schoolsite.am//

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Շենքային պայմաններ

Առկա իրավիճակ.

Սարատովկայի միջնակարգ դպրոցի ներկայիս շենքը կառուցվել է 1977 թվականին : Դպրոցն ունի բարձր հեղինակություն հասարակության շրջանում, որտեղ առկա են ամուր հիմքեր որակյալ կրթություն մատուցելու համար: Սարատովկայի միջնակարգ դպրոցը ՀՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի տարածքային բաժնում գրանցվել է 2003 թվականին: Դպրոցի նոր խմբագրությամբ կանոնադրությունը գրանցված է Տաշիրի տ/բ 27.12. 2010 թվականին: Համաձայն ՀՀ ԿԳՆ 30.05.2010 թ. N617-Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ <<Սարատովկայի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ն իրավունք ունի իրականացնելու հետևյալ հանրակրթական ծրագրեր.

- տարրական ընդհանուր
- հիմնական ընդհանուր
- միջնակարգ ընդհանուր
- Դպրոցը տիպային շենք է, հզորությունը՝ 200 սովորող
- Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի – միջնակարգ
- Դպրոցի աշխատանքային շաբաթը – 5 օրյա
- Դպրոցի աշխատանքային ժամակարգը – միահերթ
- Ենթակայությունը – մարզային
- Դպրոցի շենքի տիպը – տիպային
- Հարկայնությունը – 2 հարկանի
- Ջեռուցման եղանակը – կենտրոնացված
- Դասասենյակների թիվը – 16
- Համակարգչային դասասենյակ– 1
- Նախնական զինպատրաստության դասասենյակ– 1
- Մարզադահլիճ – 1
- Բացօթյա սպորտհրապարակ – 1

- Գրադարան – 1
- Ինտերնետային կապ – առկա է
- Մանկավարժների թիվը -15,որից մեկը համատեղությամբ
- Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանց – միացված է
- Աշակերտների թիվը –80
- Գրադարանային ֆոնդը -2500

Դպրոցն ունի մեկ մասնաշենք՝ 2017 թվականին վերանորոգվել է շենքի տանիքը և 2-րդ հարկի պատուհանները, իսկ 2019 թվականին մասնակի վերանորոգվել է մեկ դասասենյակ,կառուցվել է դպրոցի սանհանգույցները, դպրոցի համար գնվել է ավտոբուս, 2020 թվականին առաջին հարկի պատուհանները փոխարինվել են նորով: 2021թվականին կատարվել է երկրորդ հարկի ջեռուցման մոնտաժում և դռների փոխարինում նորով, 2022թ կատարվել է առաջին հարկի ջեռուցման մոնտաժում, վերանորոգվել է ճաշարանը, ԿԱՊԿՈՒ աշակերտների համար դասասենյակ, հաշմանդամության համար նախատեսված սանհանգույց: Դպրոցի շենքերի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին՝ շենքում առկա են դեպի ներս բացվող մեկ պահուստային և մեկ հիմնական ելքեր: Հաստատության նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները: Դպրոցն ունի լոկալ ջեռուցում, շուրջօրյա ջրամատակարարում:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Առկա իրավիճակ.

Դպրոցն ունի բացվող դարպաս, և արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին:

Առկա խնդիրներ.

- Դպրոցն ապահովված չէ կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով (հեռախոսներ, ռադիոհանգույց, բարձրախոսներ):
- Դպրոցը չունի ապաստարան:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Առկա իրավիճակ

Ուսումնական գործընթացի հաջողությունը կախված է ուսումնական միջավայրի առկայությունից: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորելու և սովորեցնելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների անբողջությունն է: Դպրոցը կարող է ուժեղ լինել մի ուղղությամբ, բայց այդ ուժը կթուլանա մեկ այլ ուղղության թույլ լինելու պատճառով, ուստի այս հանգամանքը ևս պետք է հաշվի առնել: Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ, չունի վերանորոգված և կահավորված մարզադահլիճ, ունի փոքրիկ գրադարան, համակարգչային սենյակ, ուսուցչանոց, դասասենյակներ, նախնական զինվորական

պատրաստության դասասենյակ, զենքի պահպանման սենյակ, ամբողջովին նոր կահավորված ճաշարան (բացակայում են միայն նոր սեղան,աթոռները), ԿԱՊԿՈՒ աշակերտների դասասենյակ՝ կահավորված գույքով:

ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Առկա իրավիճակ.

- Դպրոցում առկա է միայն մեկ համակարգչային սենյակ՝ համակարգիչները ոչ բավարար քանակի են: Առկա չէ էլեկտրոնային գրատախտակ:
- Դպրոցն ունի 2500 անուն գրականությամբ գրադարան:
- Դպրոցն օգտվում է տարբեր էլեկտրոնային հարթակներից, անհրաժեշտ ռեսուրսներից:
- Ապահովված է ինտերնետ կապով
- Գործում է«Արմաթ» լաբորատորիա
- Դպրոցում առկա է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համար հարմարեցումներ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Առկա իրավիճակ.

- Մենք ունենք առողջ կոլեկտիվ, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, որի գլխավոր պատասխանատուն տնօրենն է:
- Դպրոցում աշխատում են 15 մանկավարժներ:
- Դպրոցն ունի համատեղությամբ աշխատող մեկ աշխատակից:
- Ուսուցիչների միջին տարիքային շեմը 50 է:
- Ուսուցիչներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և աշխատանքային հինգ և ավելի տարվա փորձ:
- Դասավանդման պրոցեսում կիրառվում են այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք սովորողներին բավարար գիտելիքներով, կարողություններով և հմտություններով են ապահովում:
- Ուսուցիչները գիտեն գնահատման մեթոդաբանությունը և այն կարողանում են կիրառել:
- Գիտեն առարկայի չափորոշիչները և առաջնորդվում են դրանցով:
- Իրենց աշխատանքում պատասխանատու են և պարտաճանաչ:
- Ուսուցիչները պատրաստակամ են յուրաքանչյուր ողջամիտ առաջարկների համար:
- Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն մասնագիտական կարողություններ:
- Մանկավարժներն ունեն ՏՀՏ-ների օգտագործման միջին մակարդակ:
- Դպրոցն ունի ԿԱՊԿՈՒ աշակերտներ:
- Սովորողների թիվը՝ 2023 թ-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ 73 աշակերտ:

Առկա խնդիրներ.

- Ատեստավորման միջոցով տարակարգ ստացած ուսուցիչներ չունենք
- Վերջին հինգ տարիների ընթացքում էականորեն նվազել է նաև աշակերտների թիվը:
- Ոչ լիարժեք համագործակցություն գործընկերների հետ, որի արդյունքում քիչ են կամ

գրեթե չկան ինտեգրված դասեր:

- Մանկավարժական, գիտամանկավարժական նորամուծությունների նկատմամբ ուսուցիչների հետաքրքրությունը քիչ է:
- Ուսուցիչների մեծ մասը գրանցված չէ և չունի ուսումնական նյութեր կրթական կայքերում:
- Միջին մակարդակի իմացություն պաշտոնային պարտականությունների, նորմատիվ իրավական ակտերի:
- Նվազ մասնակցություն մրցույթների:
- Չկա համագործակցություն Հայաստանի այլ դպրոցների հետ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Առկա իրավիճակ.

Դպրոցը հիմնական և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից: Հետևաբար հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար և անբավարար լինելն է: Դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով և դպրոցի բյուջետային միջոցները բավարարում են, եթե աշակերտների թիվը դասարանում բարձր է միջինից: Դպրոցն ամսեկան վճարում է մոտավորապես 2մլն 800 հազար դրամ աշխատավարձ: Դպրոցի ֆինանսական միջոցներն ունեն նվազման միտում՝ կախված դասարանների թվից: Ֆինանսական դժվարություններն ակնհայտ կդառնան նոր ուսումնական տարում:

Դպրոցի բյուջետային ծախսերը ունեն հետևյալ ուղղությունները .

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումները
- Եկամտահարկի վճարումներ/այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում որպես կանոն չեն փոխվում
- Գրասենյակային և տնտեսական ծախսեր
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր/այս ուղղություններով բյուջետային հատկացումները միջոցների սղության դեպքում նվազեցվում են կամ ընդհանրապես չեն լինում
- Կապի ծառայությունների ծախսեր
- Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր
- Ջրմուղ-կոյուղու ծառայությունների և աղբահանության գծով ծախսեր
- Երեխաներին սննդի հատկացման ծախսեր
- Ավտոբուսի սարքավորումների և լիցքավորման գազի ծախսեր:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ

Առկա իրավիճակ.

- Դպրոցում դասավանդում են բարձր հեղինակություն ունեցող մանկավարժներ:
- Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացը:
- Աշխատանքներ են տարվում ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ

3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար, ուսումնասիրելով դպրոցի մասին եղած ինֆորմացիան, բացահայտել եմ դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու խոչընդոտները, ռիսկերը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
3.1 Դպրոցի շենքային պայմաններ	
■ Դպրոցը տիպային է, կազմված է 1 մասնաշենքից, երկհարկանի է։ ■ Դպրոցի տարածքը ցանկապատված է ■ Դպրոցն ունի 16 դասասենյակ, որից մեկը նախատեսված է ԿԱՊԿՈՒ աշակերտների համար ■ Դպրոցն ունի մարզադահլիճ, հանդերձարան, ուսուցչանոց ■ <Արմաթ> ինժեներական լաբորատորիա ■ Շախմատի դասասենյակ կահավորված անհրաժեշտ գույքով ■ Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում ■ Առկա է վերանորոգված 4 սանհանգույց, որից մեկը նախատեսված է ԿԱՊԿՈՒ երեխաների համար ■ Դպրոցն ունի վերանորոգված ճաշարան և սննդի պահեստ ■ Դպրոցն ունի պահուստային մեկ ելք ■ Դպրոցն ունի թեքահարթակ	■ Երկրորդ հարկի դասասենյակները և միջանցքը ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք ■ Դպրոցի ցանկապատը ունի փոխելու կարիք ■ Առաջին հարկի դասասենյակների դռները կարիք ունեն փոխարինելու նորով ■ Մարզադահլիճի և հանդերձարանի վերանորոգում ■ Հրաձգարանի բացակայություն ■ Համակարգչային դասասենյակի, գրադարանի կահավորում ■ Մարզահրապարակի բարեկարգում ■ Լաբորատոր սենյակի բացակայություն ■ Չկա հանդիսությունների դահլիճ

3.2 Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ	
■ Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը ■ Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները: ■ Դպրոցը գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացում՝ որպես կամավորներ ■ Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին ■ Ծնողական խորհրդի կողմից ծնողների հետ տարվող աշխատանք՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու	■ Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ ■ Աշակերտների, ծնողների կողմից ներքին իրավական ակտերի ոչ բավարար իմացություն ■ Համագործակցային գործունեության պակաս ■ Ինքնուրույն նախաձեռնությունների պակաս
3.3 Հաստատության համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների,շահառու կազմակերպությունների հետ	
■ Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ, ԳԹԿ, ԿՏԱԿ, Լոռու մարզպետարանի, ԱԻՆ-ի, զորամասերի,ոստիկանության, համայնքա-պետարանի և այլ կառույցների հետ	■ Քույր դպրոցների հետ բացակայություն ■ Բավարար մակարդակի չէ համայնքի հետ համագործակցությունը

3.4 Ուսումնական միջավայր	
■ Լուսավոր դասասենյակներ ■ Դպրոցում երաշխավորված է թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական համակազմի ազատ արտահայտվելու իրավունքները ■ Ապահովված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանի-տարահիգիենիկ, հակահամավարակային պայմանները: ■ Մանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը ■ Ապահովված են սովորողների առողջության և անվտանգության պահպանման բոլոր նորմերը: ■ ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում ■ Հաստատության գործունեության թափան-ցիկությունը ■ Ժողովրդական սկզբունքներին համապատասխան աշակերտական ինքնավարության գործու-նեությունը	■ Նորագույն նյութատեխնիկական բազայով զինված առարկայական դասարանների բացակայություն ■ Սպորտային և գեղագիտական խմբակների բացակայություն
3.5 Մանկավարժական համակազմ	
■ Դպրոցի մանկավարժները պարբերաբար մասնակցում են մասնագիտական աճն ապահովող սեմինարների՝ ստանալով համապատասխան հավաստագրեր: ■ Կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ դպրոցում, փորձի փոխանակում այլ ուսումնական հաստատությունների մանկավարժների հետ ■ Մեթոդմիավորումները ակտիվ աշխատում են և հանդես են գալիս զեկուցումներով և խորհրդակցություններով ■ Դպրոցում ապահովված են անձնակազմի	■ Չեն մասնակցում <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթին, ■ Չեն ցանկանում մասնակցել կամավոր ատեստավորմանը ■ տարակարգի

ինքնակրթության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, խթանվում են տարբեր մրցույթների, վերապատրաստումներին և կամավոր ատեստացիայի մասնակցությունը: ■ Դպրոցի մանկավարժները մասնակցել են նոր ՀՊՉ-ի վերապատրաստմանը ■ Դասապրոցեսը 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում կազմակերպվում են նոր ՀՊՉ-ին համապատասխան	
3.6 Հաստատության տրամադրած կրթության որակը	
■ Դպրոցի զարգացման ծրագրի տեսլականից բխող ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ռազմավարական պլանավորում: ■ Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան կրթության որակի, արդյունավետության բարելավում, կարիքների գնահատում ■ Դպրոցն ապահովում է յուրաքանչյուր աշակերտի ուսումնառության և դաստիարակության գործընթացը: ■ Դպրոցն կազմակերպում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ տարվող աշխատանքները համագործակցելով մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ	■ Բուհերում սովորող դպրոցի շրջանավարտ ուսանողի ցածր թիվ ■ Օլիմպիադաների մասնակցության ցածր տոկոս
3.7 Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները	
■ Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ ■ Դպրոցն օգտվում է տարբեր էլեկտրոնային հարթակներից,անհրաժեշտ ռեսուրսներից ■ Ապահովված է ինտերնետային կապով ■ Դպրոցում գործում է <<Արմաթ>> լաբարատորիա	■ Համակարգչային սենյակը հագեցած չէ ժամանակակից համակարգիչներով ■ ՏՀՏ-ի անբավարար քանակ և վիճակ ■ Լաբարատորիաների և նյութատեխնի-կական բազայի բացակայություն

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՈԼՈՐՏ	ՀԻՄՆԱԽՆԴԻՐ
❖ *Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան*	❖ Դպրոցն ընդհանուր առմամբ ունի վերանորգման կարիք: ❖ Դպրոցը չունի հանգստի սենյակ՝ նախատեսված ուսուցիչների և մնացած աշխատակիցների համար: ❖ Դպրոցի մարզադահլիճն ունի վերանորոգման կարիք, ինչպես նաև գույքի ձեռքբերման կարիք: ❖ Դպրոցի բացօթյա մարզահրապարակը ունի վերանորոգման կարիք, չկա մարտավարական դաշտ ուսումնական պարապմունքների համար: ❖ Դպրոցի բակը գտնվում է ոչ բարվոք վիճակում,ունի ասֆալտապատման և ցանկապատման կարիք: ❖ Նյութատեխնիկական բազայի, ժամանակակից սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, լաբորատոր գույքի և նյութի անհագեցվածություն:
❖ *Կառավարման և խորհրդակցական մարմիններ*	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև համագործակցության թերացում, իրենց գործառույթների և լիազորությունների մասին իրազեկվածության ցածր մակարդակ:
❖ *Մանկավարժական համակազմ*	❖ Ուսուցիչների շարունակական վերապատրաստման և ինքնազարգացման մեխանիզմների բացակայություն: ❖ Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորման մասնակցության և տարակարգի համար դիմողների ցածր տոկոս, մրցույթների, նախագծերի մասնակցության բացակայություն:
❖ *Աշակերտական համակազմ*	Ուսման նկատմամաբ մոտիվացիայի պակաս, ուսման որակի ցածր տոկոս:
❖ *Ծնողական համակազմ*	Արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում մասնակցության պակաս
❖ *Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակեր-պությունների հետ*	❖ Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների պակաս, շարունակ հայտարարվող մրցույթների , դրամաշնորհների մասնակցության բացակայություն;
❖ *ՈՒսումնական միջավայր*	❖ Դպրոցի ուսումնանյութական բազան անհամապատասխան է ժամանակակից կրթությանը :

	❖ Դասասենյակներն ունեն նոր տեխնոլոգիաներով ու նյութերով ապահովելու կարիք: ❖ Դպրոցը չունի լաբորատորիա, չունի ժամանակակից և նոր սարքավորումներ, նյութեր: ❖ Մարզադահլիճն ունի վերնորոգման կարիք, կից հանդերձարանում չկան պահարաններ և ունի վերանորոգման կարիք: ❖ Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ: ❖ Գրադարանը հարմարեցված չէ ընթերցասրահի : ❖ Դպրոցը չունի արհեստանոց:
❖ Հաստատության տրամադրած կրթության որակը	❖ Ուսումնական միջավայրի ոչ բավարար լինելու պատճառով՝ ուսուցիչները հնարավորություն չեն ունենում ուսուցումը կազմակերպել առավել գործնական և կիրառելի փորձերի օրինակներով: ❖ Սովորողները չեն մասնակցել առարկայական հանրապետական օլիմպիադաների, մի շարք առարկաների գծով մասնակցել են տարածաշրջանային առարկայական օլիմպադաների: ❖ Սովորողների շրջանում նկատվում է նախաձեռնողականության պակաս՝ տարեցտարի նվազում է սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների, իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը: ❖ Չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող սաների առկայություն:
❖ Տեխնոլոգիաներն ու կիրառվող նորարարությունները	❖ Դպրոցը չունի էլեկտրոնային գրադարան և գրականություն, անհրաժեշտ է ստեղծել թվային գրականություն : ❖ Դասասենյակներն անհրաժեշտ է համալրել առնվազն մեկական համակարգչով: ❖ Ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական թերի միջավայր : ❖ Ժամանակակից սարքավորումների,ՏՀՏ–ի անբավարար քանակ և վիճակ, : ❖ ԲՏՃՄ առարկաների լաբորատորիաների , նորագույն սարքավորումների ու նյութատեխնիկական բազայի բացակայություն:

5.Նպատակների և խնդիրների սահմանումը:

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, ակնկալվող արդյունքը,արդյունքների գնահատման չափանիշները, պատասխանատուները, գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները, ռիսկերը:

5.1 Դպրոցի շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա

Նպատակ -*Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում:*

Խնդիր

- Կատարել կոսմետիկ վերանորոգում :
- Հարստացնել հաստատության նյութատեխնիկական բազան:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ակնկալվող արդյունք	Պատասխանատուներ/կատարողներ/	Ժամկետ	Միջոցները և պարագաները
Լաբարատորիայի ստեղծում և վերազինում	Լաբարատորիա անհրաժեշտ նյութերով	Հիմնադիր, լիազոր մարմին, վարչատնտեսական համակարգող, տնօրեն	2026-2027թթ	Պետբյուջե, դրամաշնորհային ծրագրեր, արտաբյուջետային միջոցներ
Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրական գրատախտակի ներդնում	Ժամանակակից տեխնոլոգիաներով և էլեկտրական գրատախտակով զինված դպրոց	Հիմնադիր, լիազոր մարմին, վարչատնտեսական համակարգող, տնօրեն	2024 - 2025թթ	Պետբյուջե, դրամաշնորհային ծրագրեր, արտաբյուջետայ ին միջոցներ
Մարզադահլիճի մասնակի վերանորոգում և մասնակի մարզագույքի ձեռքբերում	Մասնակի վերանորոգված մարզադահլիճ և մարզագույք	Լիազոր մարմին, վարչատնտեսական համակարգող, տնօրեն	2026-2027թթ	Դպրոցի բյուջե արտաբյուջետային միջոցներ
Դպրոցի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ	Հարմարավետ և ոգեշնչող միջավայր	Վարչատնտեսական համակարգող, տնօրեն	2024-2025թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային միջոցներ, բանվոր , ծնողներ

Գնահատման չափանիշներ

Գնահատման ենթակա գործողություն	Արդյունավետ	Բավարար	Ոչ արդյունավետ
Լաբարատորիայի ստեղծում՝վերազինում ժամանակակից սարքավորումներով	Առկա է լաբարատորիա ժամանակակից սարքավորումներով և անհրաժեշտ նյութերով	Առկա է լաբարատորիա,կա ժամանակակից սարքավորումների պակաս	Չկա լաբարատորիա ժամանակակից սարքավորումներով անհրաժեշտ նյութերով
Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ էլեկտրո-նային գրատախտակի ներդնում	Առկա են Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ,էլեկտրոն ային գրատախտակ	Առկա են որոշ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ	Չկան ժամանակա-կից տեղեկատվական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային գրատախտակ
Մարզադահլիճի մասնակի վերանորոգում,մասնա կի մարզագույքի ձեռքբերում	Առկա է մարզադահլիճ՝մասամբ վերանորոգված մասնակի մարզագույքով	Առկա է մարզադահլիճ՝ մասամբ վերանորոգված, մարզագույքի պակաս	Մարզադահլիճը վերանորոգված չէ:
Դպրոցի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ	Դպրոցի կոսմետիկ վերանորոգման աշխատանքները կատարվում եմ ըստ պլանավորման,	Դպրոցի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ շեղվում են պլանավորվածից	Դպրոցի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ չեն կատարվում

Ռիսկեր

- Երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացում՝ կապված արտաքին մարտահրավերների հետ:
- Արտաբյուջետային միջոցների բացակայություն:
- Դպրոցների ֆինանսավորման բանաձևի փոփոխություն, որը կենթադրի գումարի կրճատում:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

- Հետևողական աշխատանք տանել արտաբյուջետային միջոցների գոյացման ուղղությամբ:
- Դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:

3.2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Նպատակ - *Կառավարման արդյունավետության բարձրացում՝ համագործակցային մասնակցային սկզբունքի վրա։*

Խնդիր

- Առավել մասնակցային դարձնել կառավարման ներկա մոդելը։
- Ապահովել արդյունավետ համագործակցություն կառավարման և խորհրդակացական մարմինների միջև։
- Կառավարման և խորհրդակցական մարմինների հմտությունների զարգացում։
- Շրջանավարտների խորհրդի ձևավորում։

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ակնկալվող արդյունք	Պատասխանատու-ներ/կատարողներ/	Ժամկետ	Միջոցները և պարագաները
Ուսումնասիրել դպրոցների կառավարման ներկա մոդելները՝ փորձելով տեղայնացնել լավագույն փորձը	Կառավարման լավագույն փորձի բացահայտում	Խորհրդակցական մարմիններ, տնօրեն, դասղեկ	2023-2024թթ	ՏՀՏ գործիքներ, տնօրեն խորհրդակցական մարմինների անդամներ
Խորհրդակցական մարմինների սերտ և փոխկապակցված փոխհամագործակցություն /մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ/	Իրենց գործառույթներին իրազեկ, համագործակցող խորհրդակցական մարմիններ	Խորհրդակցական մարմիններ, տնօրեն, դասղեկ, ծնող	2023-2024թթ	ՏՀՏ գործիքներ Տնօրեն Խորհրդակց ական մարմինների անդամներ
Զարգացնել մ/մ կարողություններ՝ դարձնելով դրանք բովանդակային նորարարությունների մշակման և ներդրման հարթակներ	Նորարարական մեթոդներով դասավանդում	Մեթոդական միավորումներ	2023-2024թթ	ՏՀՏ գործիքներ, տնօրեն խորհրդակցական մարմինների անդամներ
Շրջանավարտների համախմբման միջոցառումների իրականացում	Դպրոցի և շրջանավարտների միջև կապի ապահովում	Տնօրեն , մանկավարժական խորհուրդ	2023-2024թթ	Դպրոցի տարբեր տարիների շրջանավարտներ

Գնահատման չափանիշները

Գնահատման ենթակա գործողություն	**Արդյունավետ**	**Բավարար**	**Ոչ արդյունավետ**
Ուսումնասիրել դպրոցների կառավարման ներկա մոդելները՝փորձելով տեղայնացնել լավագույն փորձը	Կառավարման լավագույն փորձի բացահայտում	Կառավարման միջին մակարդակի փորձի բացահայտում	Ոչ լիարժեք իրազեկում
Խորհրդակցական մարմինների սերտ և փախկապակցված փոխհամագործակցություն	Իրենց գործառույթներին իրազեկ,համագործակցող խորհրդակցական մարմիններ	Չհամագործակցող խորհրդակցական մարմիններ	Խորհրդակցական մարմիններ, որոնք չգիտեն իրենց գործառույթները և չեն համագործակցում
Զարգացնել մ/մ կարողություններ	Նորարարական մեթոդներով դասավանդում	Տեղյակ են նորարարական մեթոդներին,սակայն քիչ են օգտագործվում	Տեղյակ են նորարարական մեթոդներին,սակայն չեն օգտագործում
Շրջանավարտների խորհրդի ձևավորում	Դպրոցի և շրջանավարտների միջև ակտիվ կապի ապահովում	Դպրոցի և շրջանավարտների միջև կապի պասիվ ապահովում	Դպրոցի և շրջանավարտների միջև կապի բացակայություն

Ռիսկերը

Շահագրգիռ կողմերի զբաղվածությամբ պայմանավորված հանդիպումների անհնարինություն

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում

3.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ,ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ,ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Նպատակը- Կարողունակ և հասարակությանն ինտեգրված քաղաքացու ձևավորում

Խնդիրները

- Զարգացնել սովորողի՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն ցուցաբերելու հմտությունները
- Ընդլայնել համագործակցությունների շրջանակը
- Դարձնել դպրոցը համայնքի համար անփոխարինելի կրթամշակութային կենտրոն:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ակնկալվող արդյունք	Պատասխանատուներ/կատարողներ/	Ժամկետ	Միջոցներ և պարագաներ
Համայնքի հետ համատեղ իրականացնել տարբեր ծրագրեր, շաբաթօրյակներ, ծառատունկ	Համայնքի զարգացում	Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, դասղեկներ	2023-2028թթ	Անհատներ արտաբյուջետային միջոցներ համայնք պետբյուջե,
Իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների շարունակականության ապահովում՝ սովորողների շրջանում հալածանքի օտարման ու բռնության դեպքերի բացառման նպատակով	Հասարակական կյանքին ինտեգրված քաղաքացիներ	Տնօրեն դասղեկներ աշխորհուրդ, ծնողխորհուրդ	2023-2028թթ	Անհատներ, արտաբյուջետային միջոցներ, համայնք, պետբյուջե
Պետության կողմից տրամադրված դպրոցական աբոնեմենտային համակարգի կիրառում	Հասարակական կյանքին ինտեգրված քաղաքացիներ	Տնօրեն, դասղեկներ, աշխորհուրդ, ծնողխորհուրդ	2023-2028թթ	Անհատներ արտաբյուջետային միջոցներ համայնք, պետբյուջե,

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատման ենթակա գործողություն	Արդյունավետ	Բավարար	Ոչ արդյունավետ
Համայնքի հետ համատեղ իրականացնել տարբեր ծրագրեր, շաբաթօրյակներ, ծառատունկ	Համայնքի հետ համատեղ իրականացվում են տարբեր ծրագրեր, շաբաթօրյակներ, ծառատունկ	Համայնքի հետ համատեղ իրականացվող ծրագրերը սահմանափակ են	Համայնքի հետ համագործակցությունը բացակայում է
Պետության կողմից տրամադրված դպրոցական աբոնեմենտային համակարգի կիրառում	Պետության կողմից տրամադրված դպրոցական աբոնեմենտները օգտագործվում են ամբողջությամբ	Պետության կողմից տրամադրված դպրոցական աբոնեմենտները օգտագործվում են մասամբ	Պետության կողմից տրամադրված դպրոցական աբոնեմենտները չեն օգտագործվում:
Իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների շարունակականության ապահովում	Իրավապահ մարմինների հետ ձևավորված է արդյունավետ համագործակցություն	Իրավապահ մարմինների հետ ձևավորված է արդյունավետ համագործակցություն, որը բերում է համագործակցության նվազեցման	Իրավապահ մարմին-ների հետ համա-գործակցությունը որևէ արդյունք չի տվել

Ռիսկերը

- Համայնքի պասիվություն:
- Դպրոցի գործունեության վերաբերյալ համայնքում ձևավորված կարծրատիպեր:
- Աշակերտական համակազմի թերահավատ մոտեցումը նմանօրինակ միջոցառումներին:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

- Համայնքի իրազեկվածության ապահովում:
- Նմանօրինակ հանդիպումների կազմակերպման կարևորության ներկայացում և հանդիպումների պատշաճ նախապատրաստում:

5.4 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Նպատակը- ուսումնական միջավայրի համապատասխանեցում ժամանակակից ստանդարտներին,մոտիվացնող ուսումնաստեղծագործական միջավայրի ապահովում սովորողների և դասավանդողների համար:

Խնդիրները

- Շենքային պայմանների բարելավում
- Ներդնել նոր կրթական տեխնոլոգիաներ,իրենց համապատասխան ենթակառույցներով
- Ապահովել ապրանքանյութական արժեքների արդյունավետ օգտագործման բավարար քանակ

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողություններ	Ակնկալվող արդյունք	Ժամկետ	պատասխանատու	Միջոցներ և պարագաներ
Լաբարատորիայի հիմնում	Գործնական դասեր անելու հնարավորություն	2026-2027թթ	Լիազոր մարմին, տնօրեն, համակարգող	Արտաբյուջետային միջոցներ , պետական բյուջե բարերարներ հովանավորներ
Նախաձեռնել միջոցառումներ մարզադահլիճը մասամբ նորոգելու ուղղությամբ	Ժամանակակից պայմաններին համապատասխան մարզադահլիճ	2026-2027թթ	Լիազոր մարմին,տնօրեն, համակարգող	
Կազմակերպել ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ	Սոցիումի լիարժեք անդամ՝ ընդգծված անհատականությամբ	2023-2028թթ	Տնօրեն ուսուցիչներ, դասղեկներ	
Ձևավորել խմբակներ ըստ սովորողների նախասիրությունների և կարողությունների	Նպատակային խմբակների միջոցով կարողությունների զարգացում ձևավորված առնվազն 2 խմբակ	2023-2024թթ	Տնօրեն, դասղեկներ, ուսուցիչներ	

Գնահատման չափանիշներ

Գնահատման ենթակա գործողություն	արդյունավետ	բավարար	ոչ արդյունավետ
Լաբարատորիայի հիմնում	Գործնական դասեր անելու հնարավորություն	Գործնական դասերի փոխարինում խնդիրների լուծումով	Գործնական դասերի բացակայություն
Նախաձեռնել միջոցառումներ մարզադահլիճը մասամբ նորոգելու ուղղությամբ	Ժամանակակից պայմաններին համապատասխան մարզադահլիճ	Մարզադահլիճի առկայություն թերություններով	Մարզագույքի բացակայություն
Կազմակերպել ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ	Կազմակերպվում են նպատակային ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ	Կազմակերպվում են ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ	Չեն կազմա-կերպվում միջոցառումներ
Ձևավորել խմբակներ ըստ սովորողների նախասիրությունների և	Նպատակային խմբակների միջոցով կարողությունների	Նպատակային խմբակների միջոցով կարողությունների զարգացում ձևավորված	Խմբակներ չեն ձևավորվել

կարողությունների	զարգացում ձևավորված առնվազն 2 խմբակ	առնվազն 1 խմբակ	

Ռիսկերը

- Երկրում սոցիալ-քաղաքական և տնտեսական իրավիճակ
- Ռեսուրսների անբավարարություն
- Սովորողների մոտիվացիայի պակաս

Ռիսկերի նվազեցմանն ուղղվածգործողություններ

- Ակտիվ սովորողների խրախուսում
- Ռեսուրսների արդյունավետ կառավարում

5.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Նպատակը- *Մրցունակ, մոտիվացված, աշակերտակենտրոն և կոմպոնտենտ անձնակազմի ձևավորում:*

Խնդիրները

- Մանկավարժամեթոդական մասնագիտական որակավորման վերապատրաստումների կայուն համակարգի ձևավորում:
- Ուսուցման գործընթացում ժամանակակից և նորարարական մոտեցումների և տեխնոլոգիաների կիրառում:
- Ուսուցիչների ներքին գնահատման համակարգի ձևավորում:
- Դպրոցում ապահովել պայմաններ, որոնք կնպաստեն մանկավարժների ստեղծագործական գործունեությանը:
- Ուսուցիչների մոտիվացիայի բարձրացում, բարձրացնել ուսուցիչների հեղինակությունը դպրոցում:
- Ծնող-ուսուցիչ սերտ համագործակցության ամրապնդում:
- Ներգրավել բարձրակարգ ոլորտի առաջատար մասնագետներին սովորողների շրջանում հետաքրքրությունը մեծացնելու նպատակով:
- Կազմակերպել փոխհամագործակցության հնարավորություններ այլ պետական և ոչ պետական դպրոցների ներկայացուցիչների հետ:
- Ստեղծել հնարավորություն մարզային և համայնքային այլ դպրոցների համար դառնալով մենթորական դպրոց:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ակնկալվող արդյունք	Պատասխանա-տուներ/կատարողներ/	Ժամկետ	Միջոցները և պարագաները
Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացի շարունակական իրականացում	Բարձր որակավորում ունեցող համակազմ: Արդյունքների հրապարակում https://lib.armedu.am/ կայքում հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարան	Լիազոր մարմին, տնօրեն, մանկավարժական համակազմ	2024-2028թթ	Ղեկավարներ ԿՑՆՍԿ ՀՄԿ,ՏՄՄԿ և այլ կազմակերպություններ
Մանկավարժական համակազմի կամավոր վերապատրաստումներ և տարակարգի աստիճան	Յուրաքանչյուր տարի կամավոր ատեստավորված և տարակարգ ստացած ուսուցիչների թիվ 2024թ՝ 3 2025թ՝ 3 2026թ՝ 4 2027թ՝4	Տնօրեն, մ/մ	2024-2028թթ	
Նոր չափորոշիչների ներդրման մեխանիզմների վերաբերյալ վերապատ-րաստումների իրականացում	Կարողունակ ուսուցիչներ	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2024թթ	
Ուսուցիչների առաջավոր փորձի փոխանակում սկսնակ ուսուցիչներին մեթոդական և ըստ կարիքի աջակցության	Կարողունակ ուսուցիչներ	Տնօրեն, ուսուցիչներ մ/մ	2023-2024թթ	
Պարբերաբար հրավիրել հայտնի անհատների, ոլորտի առաջատար մասնագետների փորձի փոխանակման, ինչպես նաև սովորողների շրջանում ուսման նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով	Տրամադրվող աջակցության բարձր որակ	Տնօրեն ուսուցիչներ	2024-2028թթ	

Ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման նպատակով պարբերաբար օգտագործել այնպիսի կիրառական ձևեր, ինչպիսիք են՝ ստեղծագործական հաշվետվություններ Դաս-սեմինարներ, Գործնական խաղեր, Դաս-հանդիպումներ, Ինտելեկտուալ խաղեր Դաս-Դերային խաղեր,Խաղերի տեսություն	Առավել ինտերակտիվ դասեր		2023-2028թթ	
Ներդպրոցական վերահսկողություն	Վերհանված խնդիրներ, լուծման եղանակներ դասերի կազմակերպում	Տնօրեն, խորհրդակցական մարմիններ ուսուցիչներ դասղեկներ, տնօրեն մ/մ	2023-2028թթ	

Գնահատման չափանիշներ

Գնահատման ենթակա գործողություն	**Արդյունավետ**	**Բավարար**	**Ոչ արդյունավետ**
Ատեստավորման ենթակա ուսուցիչների պարտադիր վերապատրաստման գործընթացի շարունակական իրականացում	Բարձր որակավորում ունեցող համակազմ	Կարիքի գնահատմամբ վերապատրաստված ուսուցիչներ	Առանց կարիքի գնահատման վերապատրաստված ուսուցիչներ
Աջակցել ուսուցիչների կամավոր ատեստա-վորմանը, տարակարգ ստանալու մեխանիզմներին:	Յուրաքանչյուր տարի կամավոր ատեստավորված և տարակարգ ստացած ուսուցիչների թիվ 2024թ՝3	Յուրաքանչյուր տարի կամավոր ատեստավոր ված և տարակարգ ստացած ուսուցիչների թիվ 2024թ՝ 1	Յուրաքանչյուր տարի կամավոր ատեստավորված և տարակարգ ստացած ուսուցիչների թիվ չի ավելացել
Նոր չափորոշիչների ներդրման մեխանիզմների վերաբերյալ վերապատ-րաստումների իրականացում	Կարողունակ ուսուցիչներ մինչև 2028թ՝բոլորը	մինչև 2028թ՝բոլորը	
Ուսուցիչների առաջավոր փորձի փոխանակում,սկսնակ ուսուցիչներին մեթոդական և ոստ կարիքի աջակցության	Առկա է ուսուցիչների առաջավոր փորձի փոխանակման, սկսնակ ուսուցիչ-ներին մեթոդական և ըստ կարիքի աջակցության կայուն գործընթաց	Իրականացվում է ուսուցիչների առաջավոր փորձի փոխանակում, սկսնակ ուսուցիչներին մեթոդական և ըստ կարիքի աջակցության, սակայն գործընթացում նկատվում են թերություններ	Ուսուցիչների առաջավոր փորձի փոխանակման, սկսնակ ուսուցիչներին մեթոդական և ըստ կարիքի աջակցության գործընթաց չի իրականացվում:

Ուսուցիչների մասնագիտական վարպետության բարձրացման կիրառական ձևեր	Առավել ինտերակտիվ դասերի կազմակերպում	Նկատվում են որոշակի թերություններ ինտերակտիվ դասերի կազմակերպման ընթացքում	Չի կազմպակերպվում ինտերակտիվ դասեր
Ներդպրոցական վերահսկողություն	Ներդպրոցական վերահսկողությունն իրականացվում է դպրոցի ՈՒԴԱՏ ռազմավարական պլանավորման համապատասխան: .	Ներդպրոցական վերահսկողությունն իրականացվում է դպրոցի ՈՒԴԱՏ ռազմավարական պլանավորմանը համապատասխան, սակայն առկա են որոշակի թերություններ	Ներդպրոցական վերահսկողությունը չի համապատասխանում ՈՒԴԱՏ ռազմավարական պլանավորմանը:

Ռիսկեր-

- *ուսուցիչների՝ նորարարություններին դժվար հարմարվելը:*
- *ուսուցիչների պասիվությունը:*
- *նախատեսվող աշխատանքների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում:*

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

- *Ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ աշխատանքների խթանում:*
- *Ռիսկերի կառավարման նպատակով կիրականացվեն ուսումնական նորարարական մեթոդների հետևողական ուսուցում և փորձի փոխանակում:*

5.6 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Նպատակը-Հայրենասեր,կարեկցող,սոցիալական բարձր պատասխանատվություն ունեցող, գիտելիքներով հարուստ, վերլուծական հմտություններ, ինքնուրույն կարծիք և տեսակետ ունեցող անհատի ձևավորում:

Խնդիրները

- Մեծացնել սովորելու նկատմամբ հետաքրքրությունը:
- Խթանել ստեղծագործական ունակություններն ու նորարական միտքը:
- Խթանել առարկայական ծրագրերից բացի այլ միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունը :
- Մեծացնել սպորտի դերը դպրոցի կյանքում:
- Բարձր սոցիալական պատասխանատվության ձևավորում:
- Կառավարչական որոշումներում աշակերտների ներգրավածության ապահովում:
- Ամրապնդել ուսուցիչ-ծնող-աշակերտ կապը:
- Ընդլայնել աշակերտական խորհրդի իրավունքներն ու լիազորությունները:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ակնկալվող արդյունք	Պատասխանատուներ/կատարողներ/	Ժամկետ	Միջոցները և պարագաները
Դասավանդումը դարձնել առավել ժամանակակից, նորարարական մոտեցումներով՝ կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներ	Սովորողի կողմից դասապրոցեսի հանդեպ հետաքրքրության մեծացում	Ուսուցիչներ, մ/մ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Պարբերաբար կազմակերպել քննարկումներ,բանավեճեր տարբեր դասարանների սովորողների միջև	Զարգացնել վերլուծական մտածողությունը	Ուսուցիրներ, Մ/մ,տնօրեն, դասղեկ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Առարկայական օլիմպիադաներին,հանրապետական օլիմպիադաներին սովորողների թվաքանակի ավելացում ապահովել,ինչպես նաև մասնակցություն ունենալ տեղական և միջազգային մրցույթներին	Բացահայտել երեխայի գիտելիքի բարձր մակարդակը	Տնօրեն,մ/մ, դասղեկ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Այցելություն մշակութային օջախներ,հուշահամալիրներ	Հետաքրքրասիրության ինքնուրույն դատողության հնարավորություն	ուսուցիչներ	2024-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Կազմակերպել քննարկումներ շրջակա միջավայրի պահպանության թեմաներով	Բարձր սոցիալական պատասխանատվության ձևավորում	ուսուցիչներ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Դաստիարակչական աշխատանքներ՝ ուղղված կայուն արժեհամակարգ ձևավորելուն	Պատասխանատվության զգացում	Այդ օրերին դպրոցի դասերը և կառավարումը իրականացնում է աշակերտական խորհուդը	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում
Մասնագիտության կողմնորոշման նպատակով աշխատանքներ	Մասնագիտության ընտրություն	դասղեկներ	2023-2028թթ	Ֆինանսավորում չի պահանջում

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատման ենթակա գործողություն	արդյունավետ	բավարար	Ոչ արդյունավետ
Դասավանդումը դարձնել առավել ժամանակակից կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներ	Սովորողի կողմից դասապրոցեսի հանդեպ հետաքրքրության մեծացում	Սովորողի կողմից դասապրոցեսի հանդեպ հետաքրքրության նվազում	Սովորողի կողմից դասապրոցեսի հանդեպ հետաքրքրության պակաս
Կազմակերպել բանավեճեր և քննարկում դասարանների միջև	Զարգացնել վերլուծական մտածողությունը	Վերլուծական մտածողության պասիվ զարգացում	Վերլուծական մտածողություն չի զարգացել
Առարկայական օլիմպիադաները և այլ միջազգային մրցույթներին մասնակցության ապահովում	Բացահայտել երեխայի գիտելիքների բարձր մակարդակը	Բացահայտել երեխայի գիտելիքների միջին մակարֆակը	Գիտելիքի բացակայություն
Այցելություն մշակութային օջախներ, հուշահամալիրներ	Հետաքրքրասիրության և ինքնուրույն դատողության հնարավորություն	Մասամբ հետաքրքրասիրության և ինքնուրույն դատողության հնարավորություն	Հետաքրքրասիրության և ինքնուրույն դատողության բացակայություն
Կազմակերպել աշակերտական ինքնավարության օր	Պատասխանատվության զգացում	Պատասխանատվության մասնակի զգացում	Պատասխանատվության բացակայություն
Մասնագիտության կողմնորոշման նպատակով աշխատանքներ	Մասնագիտության ընտրություն	Մասնագիտության ընտրության աշխատանքները թերի են	Մասնագիտության ընտրության աշխատանքներ չեն կատարվել

Ռիսկերը- Աշակերտների մասնակցության ցանկության պասիվություն

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ Սովորողների ինքնավարության զարգացմանն ուղղված աշխատանքների խթանում

5.7 ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԱԿ

Նպատակը՝

- Ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական հմտությունների շարունակական զարգացում:
- Կրթության որակի շարունակական բարելավում և արդի մարտահրավերներին համապատասխանեցում , առավել արդիական և գործնական գիտելիքների տրամադրում:
- Սովորողների անհատական և կրթական կարողությունների կատարելագործում, հմտությունների զարգացում:

Խնդիրները-

- Ուսուցիչների վերապատրաստման և կարողությունների զարգացման կայուն և արդյունավետ համակարգի ձևավորում:
- Կրթության արդյունավետ կառավարման համակարգի ձևավորում:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ակնկալվող արդյունք	Պատասխանա-տուներ/կատարողներ/	Ժամկետ	Միջոցները և պարագաները
Ուսուցիչների համար կազմակերպել մասնագիտական մանկավարժահոգեբանական տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիական վերապատրաստման դասընթացներ	Բարձր որակավորում ունեցող ուսուցիչներ	Մեթոդմիավորուներ, տնօրեն	2024-2028 թթ	պետբյուջե
Աշակերտների և ծնողների շրջանում շարունակական հարցումների իրականացում՝ կրթության որակի գոհունակության և կարիքների բացահայտման նպատակով	Առկա խնդիրների և ակնկալիքների բացահայտում	Տնօրեն, մեթոդմիավորուներ, ուսուցիչներ	2023-2028թթ	Ֆինանսավո-րում չի պահանջում
Մեծացնել ներգավածությունը առարկայական և հանրապետական օլիմպիադաներում և այլ մրցույթներում	Օժտված երեխաների կարողությունների բացահայտում	Տնօրեն, մեթոդմիավորուներ ,ուսուցիչներ	2024-2028թթ	Ֆինանսավո-րում չի պահանջում
Սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով կազմակերպել աշակերտական կոնֆերանսներ,մրցույթներ, վիկտորինաներ կրթության որակի բարելավման նպատակով	Նախաձեռնողականության մեծացում արտադասարանային հմտությունների զարգացում	Տնօրեն,ուսուցիչներ	2023-2028թթ	Ֆինանսավո-րում չի պահանջում

Գնահատման չափանիշներ

Գնահատման ենթակա գործողություն	**արդյունավետ**	**բավարար**	**Ոչ արդյունավետ**
Ուսուցիչների համար կազմակերպել մասնագիտական մանկավարժահոգեբանական տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիական վերապատրաստման դասընթացներ	Ուսուցիչների համար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ	Ուսուցիչների համար կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ, սակայն քիչ են օգտագործվում ՏՀՏ-ը	Ուսուցիչների համար չեն կազմակերպվում վերապատրաստման դասընթացներ
Աշակերտների և ծնողների շրջանում շարունակական հարցումների իրականացում՝ կրթության որակի գոհունակության և կարիքների բացահայտման նպատակով	Իրականացվում են հարցումներ, բացահայտվում կարիքները,կարգավորվում դրանք	Իրականացվում են հարցումներ, կատարվում են դասալսումներ բացահայտվում կարիքները, կարգավորվում դրանք,սակայն նկատվում են շեղումներ	Հարցումներ և դասալսումներ չեն իրականացվում
Մեծացնել ներգավածությունը առարկայական և հանրապետական օլիմպիադաներում և այլ մրցույթներում	օլիմպիադայի մարզային փուլի մասնակիցներ՝ 2024-2026թթ-2 2027-2028թթ-3 Հանրապետական -1	օլիմպիադայի մարզային փուլի մասնակիցներ՝ 2024-2026թթ-1 2027-2028թթ-2	Օլիմպիադայի մարզային փուլի մասնակիցներ չկան

Ռիսկերը

Սովորողների ուսման նկատմամբ անտարբերություն

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

Ուսման մեջ հաջողություններ գրանցած սովորողների խրախուսում

5.8 ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակ - ՏՀՏ- ների կիրառման միջոցով ուսուցման արդյունավետության բարձրացում, դասավանդման մոտեցումների, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում :

Խնդիր -Ապահովել նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնումը դասապրոցեսում:

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	Ակնկալվող արդյունք	Պատասխանատուներ	Ժամկետ	Միջոցները և պարագաները
ՏՀՏ տեխնոլոգիաների ներդնումը դասապրոցեսում	Դասապրոցեսն ինրականացվում է ՏՀՏ-ի կիրառմամբ	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2028թթ	Ղեկավարություն, միջոցներ, նյութատեխնիկական հագեցվածություն
Օգտագործել տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ	Ուսուցիչներ և սովորողներ, ովքեր օգտագործում են տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ	Տնօրեն, ԿՏԱԿ	2023-2028թթ	
Անցկացնել մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ	Մեդիագրագետ ուսուցիչներ և սովորողներ	Տնօրեն, ԿՏԱԿ, ԿԶՆԱԿ	2023-2028թթ	

Գնահատման չափանիշներ

Գնահատման ենթակա գործողություն	Արդյունավետ	Բավարար	Ոչ արդյունավետ
ՏՀՏ տեխնոլոգիաների ներդնումը դասապրոցեսում	Յուրաքանչյուր տարի ավելացել է ՏՀՏ-ի նպատակային կիրառումը դասապրոցեսին	Յուրաքանչյուր տարի ավելացել է ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսին	Դասապրոցեսին ՏՀՏ չի օգտագործվում
Օգտագործել տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ	Ուսուցիչներ և սովորողներ , ովքեր կիրառում են տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ	Ուսուցիչներ և սովորողներ, ովքեր կիրառում են տարբեր էլեկտրոնային կրթական ռեսուրսներ շատ քիչ քանակով	Ուսուցիչներ և սովորողների կոմից էլեկտրոնային կրթական ռեսուրսներ չեն օգտագործվում
Անցկացնել մեդիագրագիտության վերաբերյալ սեմինարներ, քննարկումներ	Մեդիագրագետ ուսուցիչներ և սովորողներ	Որոշ չափով մեդիագրագետ ուսուցիչներ և սովորողներ	Ուսուցիչները և սովորողները մեդիագրագետ չեն

Ռիսկեր

Դպրոցի նյութատեխնիկական բազայի ոչ բավարար հագեցվածություն

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողություններ

- Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում
- Ռեսուրսների արդյունավետ կառավարում

6.ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատական գործընթաց է : Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշներն ամփոփվում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը:

Ցուցանիշներն անրաժեշտ են ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Հանրակրթության մասին օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը: Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատման մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները: Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղված է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը կիրականացվի հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների ներդպրոցական վերահսկողության պլանների կատարողականների ամենամյա հաշվետվությունների հիման վրա:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն, տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում՝ ըստ հաստատված հաշվետվության ձևերի ու ժամանակացույցի: Ծրագիրը տնօրենի կողմից պետք է պարբերաբար վերանայվի և համապատասխան փոփոխություններով հանդերձ՝ հավանության արժանանա կառավարման խորհրդի կողմից:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները՝

- Զարգացման ծրագրի հիման վրա միջնաժամկետ /մեկ տարվա համար նախատեսված/ աշխատանքային պլանի կազմում
- Դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 2 անգամ դպրոցի տվյալ ուստարվա համար ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման քննարկումն ու համապատասխան գնահատականների ամրագրումը
- Յուրաքանչուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների
- Համայքնի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավումը դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին և այդ շրջանում կազմակերպված միջոցառումներին

- Ընթացիկ աշխատանքների և արդյունքների վերաբերյալ դպրոցի պաշտոնական կայքում հրապարակում
- Ծրագրի իրականացման տարեկան ամփոփում և արդյունքների ներկայացում դպրոցի մանկավարժական, կառավարման խորհուրդներին

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ

Ժամանակի պահանջներից և ստեղծված իրավիճակից ելնելով՝ սույն ծրագիրը ենթակա է լրամշակման և փոփոխման: